# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, +374 91 91 26 40, lermontovogjuxapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

02 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 79

## ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՏԱՌԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 06-026-0103-0014 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ, ԱՇՈՏ ՍԱՄՎԵԼԻ ՂՈՒՄԱՇՅԱՆԻ 1/2 ԲԱԺՆԵՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՎԵՏԼԱՆԱ ԻՎԱՆԻ ՂՈՒՄԱՇՅԱՆԻ 1/2 ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի դրույթներով, ՀՀ կառավարության 29.12.2011 թ-ի "Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 17.01.2001 թ-ի թիվ 30 որոշմոն ուժը կորցրած ճանաչելու մասին" թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով, Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 27.06.2024 թ-ի թիվ 32 դրական եզրակացությունը և հաշվի առնելով Լերմոնտովո համայնքի ավագանու 16.07.2024 թ-ի թիվ 18 որոշումը, Աշոտ Սամվելի Ղումաշյանի ժառանգության գործ թիվ 50/19թ./գրանցամատյանում թիվ 1226/ վարձակալության իրավունքի 1/2 բաժինը և Սվետլանա Իվանի Ղումաշյանի վարձակալության 1/2 բաժինը՝ շառանգության գործ թիվ 1225

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի Անտառաշեն բնակավայրի տարածքում գտնվող 06-026-0103-0014 կադաստրային ծածկագրի 1.22724հա մակերեսով բնակավայրի "այլ հողեր" փոխադրել գյուղատնտեսական նշանակության "խոտհարք" գործնական նշանակության և ճանաչել Աշոտ Սամվելի Ղումաշյանի 1/2 և Սվետլանա Իվանի Ղումաշյանի 1/2 չափով վարձակալության իրավունքները:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

3.Ուժը կորցրած ճանաչել Լերմոնտովո համայնքի ղեկավարի 19.07.2024 թ-ի թիվ 55 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, +374 91 91 26 40, lermontovogjuxapetaran@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 80

## ԱՇՈՏ ՍԱՄՎԵԼԻ ՂՈՒՄԱՇՅԱՆԻՆ 1/2 ԲԱԺՆԵՄԱՍԻ ԵՎ ՍՎԵՏԼԱՆԱ ԻՎԱՆԻ ՂՈՒՄԱՇՅԱՆԻՆ 1/2 ԲԱԺՆԵՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 06-026-0103-0014 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԻ ՃՇՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29.04.2021 թ-ի թիվ 698-Ն որոշմամբ, հիմք ընդունելով անշարժ գույքի համար "ԿԱՐՏՈԳՐԱՖ" ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագիծը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Ճշտել Աշոտ Սամվելի Ղումաշյանին 1/2 բաժնեմասի և Սվետլանա Իվանի Ղումաշյանին 1/2 բաժնեմասի վարձակալության իրավունքով պատկանող 06-026-0103-0014 ծածկագրով հողամասի սահմանների տեղադիրքը՝ հիմք ընդունելով ներկայացված հատակագիծը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, +374 91 91 26 40, lermontovogjuxapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

02 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 81

### ՄԻԽԱԻԼ ՍՏԵՓԱՆԻ ՇՈՒԲԻՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 29.12.2005 թ-ի թիվ 2387 որոշմամբ, ՀՀ ՀՕ 60 հոդվածով, ՀՀ կառավարության 18.05.2006 թ-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, "Նորմատիվ իրավական ակտերի մասին" ՀՀ օրենքով, հիմք ընդունելով "ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՐՇԱԿԻ" ԱՁ-ի կողմից /որակավորման վկայական՝ 006, 2011-12-05, մուտքագրման ծածկագիր՝ 2024JQKBHC/ անշարժ գույքի համար կազմված հատակագիծը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Օրինականացնել ՀՀ ԼՄ Լերմոնտովո համայնքի 06-043-0034-0001 ծածկագրի տակ գտնվող 0,242հա հողամասում ինքնակամ կառուցված անասնաշենք՝ 264,03քմ արտաքին մակերեսով, նկուղ՝ 113,15քմ արտաքին մակերեսով և ճանաչել Միխաիլ Ստեփանի Շուբինի սեփականության իրավունքը:

2.Վերը նշված կառույցը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չի ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չի քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3.Ինքնակամ կառույցի օրինականացման համար 387 740 ՀՀ դրամ 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Վերը նշված գույքի զբաղեցրած հողամասը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

5.Անշարժ գույքի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

6.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից և ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի Լոռու ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, +374 91 91 26 40, lermontovogjuxapetaran@mail.ru

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

03 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 82

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ Հողային օրենսգրքի 43-րդ հոդվածով, հաշվի առնելով Լերմոնտովո համայնքի ավագանու 21.06.2024 թ-ի թիվ 13 որոշումը, Լոռու մարզպետի 13/08/2024 թ-ի թիվ 05/111,3/06570-2024 գրությամբ տրված դրական եզրակացությունը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող 0,03325հա /կադաստրային ծածկագիր՝ 06-043-0025-0045/ բնակավայրերի այլ հողեր գործառնական նշանակության հողամասը փոփոխել բնակելի կառուցապատման նշանակության հողամասի:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**